



## **Ստեղծագործում են մեր ուսանողները**

\* \* \*

Բարեւ, իմ մանկության ընկեր: Երբեք չեմ  
մտածել, որ մի օր քեզ նամակ կգրեմ: Այս-  
քան բան ունեմ քեզ ասելու և միաժամանակ  
չգիտեմ ինչ ասել: Երևի քեզ առաջին հերթին  
շնորհակալություն հայտնեմ քեզ: Շնորհա-  
կալ եմ քեզ իմ հերիաթալից մանկության  
համար: Ամենապարզ ու ամենահասարակ  
բառերով դու այնքան կարևոր խորհուրդներ  
ես տվել երեխաներին, որ չսիրել ու չհար-  
գել քեզ անհնար է: Կստահ եմ, որ բոլորն  
էլ՝ մեծից փոքր, սիրում են քեզ ու քո աշ-  
խատանքները: Աշխատանքներ, որոնք կար-  
դալով՝ փոքրերը ձգտում են նմանվել քո  
ստեղծած հերոսներին, իսկ մեծերը՝ վերա-  
դառնում են անհոգ մանկություն, ուր ամեն  
ինչ հեշտ էր ու պարզ, ուր բարին հաղթում  
էր չարին: Առաջին անգամ մորս շուրթերից  
եմ լսել քո հերիաթաները, որոնց օգնությամբ



Ալյոնա ԲԱՂԻՃՅԱՆ  
«Լրագրություն», 3-րդ կուրս

# ՄԵՐ ԱՌԱՋԻՆ ՈՒԽՏԱԳԱՍՑՈՒԹՅՈՒՆԸ

Սենք՝ բանասիրական ֆակուլտետի առաջին  
կուրսի ուսանողութիներս, կուրսղեկ Զ.Քալայանի  
ուղեկցությամբ, այցելեցինք Ստեփանակերտում  
գտնվող ԱՐ պատճենական թանգարան:

Թաճգարանը միակն է Արցախի տարածքում, որը մեզ ծանոթացնում է մեր երկրի պատմությանը՝ վաղ ժամանակներից մինչև մեր օրերը։ Մեր ուղեկցորդուհին՝ Գ.Աբրահամյանը, մեծ սիրով մեզ ծանոթացրեց թանգարանում եղած ննուշներին և պատմեց ամեն ինչի մասին։ ԱՅ պատմաերկրագիտական թանգարանն ստեղծվել է 1939թ-ին։ Չնայած Խորհրդային Ադրբեջանի կողմից իրականացվող քաղաքականությանը, թանգարանը կարողացել է հավաքել ու պահպանել բավականին հարուստ ազգային նյութական, հոգևոր արժեքներ։ Արցախի Հանրապետությունում իրականացվող պեղումների շնորհիվ այսօր էլ թանգարանն ընդլայնում է իր ցուցանուշների բազմաբնույթ շարքը։ Առաջին սրահը սկսվում է հին արցախցու ժողովրդական ավանդույթների համահունչ վաղնջական ժամանակների պատմությունից, մշակութային արժեքների ցուցադրումից։ Հայոց առաջին մարգարե Գրիգոր Լուսավորիչը Արցախում հիմնադրել է առաջին եկեղեցիներից մեկը՝ Ամարասը, որի լուսանկարի և համապատասխան քարտեզի ցուցադրությամբ սկսվում է թանգարանի միջնադարյան բաժինը։ Այստեղ առկա



Են նաև Հարավային Կովկասում նրա քարոզչության իրական ապացույցներ: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում ազգագրության բաժինը: Ցուցադրությունը սկսված է արցախցու նահապետական ընտանիքի տեսարանով: Ներկայացված են նաև գորգագործական իին դագգահ, արցախյան գորգագործության նմուշներ: Առավել հարուստ նյութերով են համալրված նոր և նորագույն շրջանները ներկայացնող ցուցասրահները, որտեղ ներկայացվում են արցախահայության մղած ազգային պայքարի պատճական արտացոլանքները, հաղթական անդրադարձները, պետականության հաստատման փաստարկները:

Նարե ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱրՊՅ-ՈՒՄ ՍԵԿՆԱՐԿԵԼ է «ճԱՆԱՋԻՌ ԱՐՑԱԽՆԸ»  
ԽՈՐԱԳԻՐԸ ԿՐՈՂ ԱՐԾԱՎՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

2020թ. սեպտեմբեր  
ամսվա սկզբից ԱրԴԵ-  
ում մեկնարկել է  
«ճանաչիր Արցախը»  
արշավների ժրագիրը:  
Նախաձեռնությունը  
հայրենածանաչողա-  
կան և բնապահպա-  
նական բնույթ է  
Կրում: Ծրագրի շրջա-  
նակներում համալ-  
սարանական և ֆա-  
կուլտետային տար-  
րեր խմբեր այցելել  
են «Տիգրանակերտ»  
պետական պատմամ-



Ձակութային արգելոց, Վանքասար, Դիզափայտ, Շումանոսի Կիրծ, Ամարաս, Դադիվանք, Երիցման-կամց վանք: Այս շարքը շարունակական է լինելու, և բակալավրիատի առկա համակարգում սովորող բոլոր ուսանողները հնարավորություն են ունենալու մեկ անգամ օգտվելու արշավների ծրագրից: Ծրագրին արդեն մասնակից դարձած ուսանողները կիսվել են իրենց տպավորություններով:

«Իմ կարծիքով, նման արշավները հնարավորություն են տալիս ոչ միայն ճանաչելու մեր հայրենիքը, այլև բացահայտելու ինքներս մեզ ու օգնելու դառնալ ավելի ճիշտ ու հայրենասեր քաղաքացի։ Հուսով եմ՝ նմանատիպ արշավները շարունակական կլինեն, և մեր այս արշավների շարքը վարակիչ կլինի նաև մյուս կրթական հաստատությունների համար», - նշել է «Կերպարվեստ» մասնագիտության առաջին կուրսիս ուսանողութիւն Լիլիթ Մարեկսյանը:

Արմինե Այվազյանը, ով սովորում է «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության առաջին կուրսում, նշել է, որ այցելելով Տիգրանակերտ և Կանքասար՝ տեղեկացել են պատմամշակութային կորողների մասին հետաքրքիր ու գրավիչ պատմություններից:

«Ծատ տպավորված եմ: Բոլորը շատ անմիջական էին, և բոլորիս զերմ, ուրախ ու ակտիվ ժամանցը ապահովված էր: Օրվա ամենակարենոր ձեռքբերումներից մեկը նոր ընկերներն էին, որոնց հետ ծանոթացա արշավի ընթացքում», - ասել է նա:

«Կառավարում» մասնագիտության առաջին կուրսի ուսանող Վահե Ասրիյանը նշել է, որ ճիշտ ընտրություն է կատարել համալսարանի և մասնագիտության ընտրության հարցում, և դրա վառ ապացույցը բարձր առաջադիմությամբ ընդունվածներին որպես խրախուսանք արշավի մասնակից դարձնելու էր։ Նա

ոլություններով և նշել.  
պավորիչը մեկտեղված  
ստանալով վերադար-  
սնակցել նաև առաջի-  
ներին»:

սսնագիտության 3-րդ Ասրյանը, ով ծրագրի հասում, նշել է, որ լավ ամեն նախադրյալներից լնան է, և ուսանողների ջմունքը բավարարելու երպումը հիանալի մի-

ույնապես կիսվել է տպավորություններով և նշել Հածելին, օգտակարն ու տպավորիչը մեկտեղված նն: Հոգևոր մեծ էներգիա ստանալով Վերադարձանք տուն՝ ակնկալելով մասնակցել նաև առաջի-այում նախատեսվող արշավմերին»:  
«Աշխարհագրություն» մասնագիտության 3-րդ ուրսի ուսանողութի Մարիամ Ասրյանը, ով ծրագրի դրանակներում եղել է Ամարասում, նշել է, որ լավ ասնագետ դառնալու ամենամեծ նախադրյալներից եկը հայրենաճանաչողությունն է, և ուսանողների սյս մեծ ու կարևոր պահանջմունքը բավարարելու ամար արշավմերի կազմակերպումը հիանալի մի-ոց է:

«Նորովի բացահայտեցինք մեր պատմական գոր հիմքերն Ամարասում: Անհավանական զգացությունների տեղատարափ էր, ևս մեկ անգամ պարտություն ապրեցի, որ հայ եմ, քրիստոնյամ», - ասել է Մ. Ասրյանը:

«Կիրառական մաթեմատիկա և ինֆորմատիկա»  
ասնագիտության երկրորդ կուրսի ուսանողութիւն  
ենա Ամիրիխանյանը, գրիունակություն հայտնելով  
րագրից, կիսվել է տպավորություններով՝ նշելով,  
որ արշավն այնքան դրական կողմեր ունի և օրն  
սյնքան հագեցած էր, որ ուսանողության ամենա-  
հայլոր որենից մենու լուրջնա:

«Պատմական վայրեր, դիտարժան կոթողներ, անրօգուտ աշխատանք, ընկերական մթնոլորտ ու սմենավառ տպավորությունները ստացանք, որոնք եզ կուղեկցեն ընդմիջություն»: